Հավելված N 1
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
2013թ. հուլիսի 24-ի
N24-Ա/Ք հրամանի

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 6-23

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Երևան «23» 01 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, ի դեմս Հայկ Դեմոյանի (այսուհետև՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի պահպանում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված 10534800 (տասը միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

### 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները.

2.1.2. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.3. չընդունել իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ.

2.1.4. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում)
գ. Իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.5. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Կոմիտեի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները.

2.2.3. Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց.

2.2.4. ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը

2.3.2. Կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. Իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվություն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին ծանուցում է Կազմակերպությանը:

2.3.5. Ստուգել և ամփոփել կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական և որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափիմասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ.

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ-ին հանձնել սահմանված ժամկետում:

2.4.3. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն Պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով.

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.5. աշխատանքի ապասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ-ին.

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու

որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ.

2.4.7. Իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.8. Սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ՝ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ շրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ.

2.4.9. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները ճշնդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.11. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.

## 3. Թեմայի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 10534800 (տասը միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

## 4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

## 5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 9692016 (ինը միլիոն վեց հարյուր ինսուներկու հազար տասնվեց) ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն Պայմանագրով նախատեսված գումարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե Միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

## 7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## 9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

9.2.1. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված ծրագրի հայտը.

9.2.2. Առաջադրանքը (Հավելված 1).

9.2.3. Օրացուցային պլանը (Հավելված 2).

9.2.4. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3)

9.2.5. Գիտական ծրագրի նախահաշիվը (Հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ նախագահություն
Ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24
Արարատ բանկ ԲԲՀ/հ 1510005175820100
ՀՎՀՀ 00005673
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

Ռ. Մարտիրոսյան
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կ. Տ.

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ ՊՈԱԿ
Ծիծեռնակաբերդի հուշահամալիր
Զարգացման հայկական բանկ
Հ/Հ 1810052108913313

Տնօրեն՝ Հայկ Դեմոյան

(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված 1

«23» 01 2015 թ.
N 23 պայմանագրի

# ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության ուսումնասիրություն» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե
2. Աշխատանքի նպատակը՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բազմակողմանի ուսումնասիրություն
3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները: ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության ուսումնասիրություն» գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքները պետք է իրականացվեն պատշաճ գիտական մակարդակի վրա: Դրանք իրենց շրջանակում ներառելու են Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բազմակողմանի ուսումնասիրությունը: Ընդ որում, առանձնակի ուշադրություն է դարձվելու մինչ այժմ քիչ ուսումնասիրված, կամ ընդհանրապես չուսումնասիրված դրվագների վրա, ինչի շնորհիվ ապահովվելու է իրականացվող ուսումնասիրությունների գիտական նորույթը: Կատարված աշխատանքի արդյունքները կարող են արտացոլվել մենագրությունների, հոդվածների, էլեկտրոնային հրատարակությունների, ժամանակավոր ցուցադրությունների տեսքով:
4. Աշխատանքի բովանդակությունը:

   ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության ուսումնասիրություն» գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքները կարելի է բաժանել մի քանի ուղղությունների:

   ա. Մինչ այժմ չուսումնասիրված կամ քիչ հետազոտված թեմաների գիտական ուսումնասիրություն: Այս բաժնում կարևոր տեղ են զբաղեցնում նախացեղասպանական շրջանում Օսմանյան կայսրության հայերի ամենօրյա կյանքի առանձին դրվագներին վերաբերող ուսումնասիրությունները, ցեղասպանության գենդերային ասպեկտների ուսումնասիրությունը, մշակութային արժեքների ոչնչացման ուսումնասիրությունը, հետցեղասպանական շրջանի որբահավաք աշխատանքների, ցեղասպանության հոգևոր և նյութական հետևանքների հետազոտությունը:

   բ. Առկա լուսանկարային ֆոնդի ճշգրտում և հարստացում: 2008 թվականից լուրջ աշխատանք է տարվում Արևմտյան Հայաստանի և Հայոց ցեղասպանության թեմային առնչվող լուսանկարային նյութի համացուցակի կազմակերպման և դրանց աղբյուրների ճշտման ուղղությամբ: Շարունակական բնույթ է կրում թեմայի վերաբերյալ դեռևս անհայտ լուսանկարների հայտնաբերման և շրջանառման մեջ դնելու գործընթացը:

գ. Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության վերաբերյալ գրականության և թանգարանային միավորների ձեռքբերում գիտահավաքչական աշխատանքների միջոցով: Սկսած 2007 թվականից Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը սկսել է հետևողական և լայնածավալ աշխատանք՝ գիտական ֆոնդերի և գրադարանի համալրման ուղղությամբ: Անընդհատության սկզբունքով ձեռք է բերվում արժեքավոր և հազվագույտ գրականություն, որը ներկայացնում է ցեղասպանության ականատեսների վկայություններ և տպագրվել է Հայոց ցեղասպանության տարիներին կամ անմիջապես դրանից հետո, ինչպես նաև վերջին տարիներին հրատարակված ցեղասպանագիտական հետազոտություններ:

դ. 1894-1896թթ. Համիդյան ջարդերին, 1909թ. Ադանայի կոտորածին և Հայոց ցեղասպանությանը միջազգային հանրության արձագանքների ուսումնասիրության:

ե. Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական ցուցադրության կազմակերպում և սպասարկում: «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների շնորհիվ հնարավորություն է ստեղծվում պարբերաբար փոփոխել և համալրել Հայոց ցեղասպանության մշտական ցուցադրությունը:

զ. Գրահրատարակչական գործունեություն:

է. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի համացանցային կայքի պարբերական թարմացում: Մասնավորապես, նախատեսվում է զետեղել մի քանի օնլայն ցուցադրություն:

ը. Գիտաժողովների կազմակերպում: Սկսած 2007 թվականից Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ կազմակերպել է յոթ միջազգային գիտաժողով:

թ. Հրապարակային դասախոսություններ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության վերաբերյալ:

ժ, Ժամանակավոր ցուցադրությունների պատրաստում: 2007 թվականից ի վեր ՀՑԹԻ-ը պատրաստել և Հայոց ցեղասպանության թանգարանում ներկայացրել են բազմաթիվ ժամանակավոր ցուցադրություններ:

ի. Թանգարան-ինստիտուտն ակտիվորեն ներգրավվում է միջազգային համագործակցության ոլորտ՝ փոխհամագործակցության պայմանագրեր ստորագրելով տարբեր երկրների համանման կենտրոնների ու թանգարանների հետ:

5. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը՝ տարեկան հաշվետվություն:



Հավելված 2
«23» 01 2015 թ.
N 2-23 պայմանագրի

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության ուսումնասիրություն» ծրագրի

| NN Ը/Կ | Անվանումը | Իրականացվելիք միջոցառման Համառոտ բովանդակությունը | Ակնկալվող արդյունքները | Կատարման ժամկետները | Պահանջվող գումարը (հազար դրամ՝ համաձայն Պայմանագրի 5.2. կետի ) |
|---|---|---|---|---|---|
| | Առաջին փուլ | Թանգարան-ինստիտուտի մշտական ցուցադրության | Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի նոր ցուցադրության ներկայացում | 31.03.2015 | 2106900 |
| | Երկրորդ փուլ | Հայոց ցեղասպանության ընթացքում մշակութային արժեքների ոչնչացման ուսումնասիրություն, հետցեղասպանական շրջանի որբահավաք և որբախնամ աշխատանքների ուսումնասիրություն: Առկա լուսանկարային ֆոնդի հարստացում: Հայոց ցեղասպանության պատմության վերաբերյալ գրականության և այլ նյութերի ձեռք բերում: | Հավաքչական աշխատանքի ծավալում, առկա և նորահայտ նյութի ուսումնասիրում և գիտական մշակում: Գիտական հոդվածների պատրաստում, հավաքչական աշխատանք: Կազմակերպչական աշխատանքներ | 30.06.2015 | 2633700 |
| | Երրորդ փուլ | Հայոց ցեղասպանության ընթացքում մշակութային արժեքների ոչնչացման ուսումնասիրություն, հետցեղասպանական շրջանի որբահավաք և որբախնամ աշխատանքների ուսումնասիրություն: Առկա լուսանկարային ֆոնդի հարստացում: Հայոց ցեղասպանության պատմության վերաբերյալ գրականության և այլ նյութերի ձեռք բերում: | Հավաքչական աշխատանքի ծավալում, առկա և նորահայտ նյութի ուսումնասիրում և գիտական մշակում: Գիտական հոդվածների պատրաստում, հավաքչական աշխատանք: Կազմակերպչական աշխատանքներ: | 30.09.2015 | 2633700 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Չորրորդ փուլ | Հայոց ցեղասպանության ընթացքում մշակութային արժեքների ոչնչացման ուսումնասիրություն, հետցեղասպանական շրջանի որբահավաք և որբախնամ աշխատանքների ուսումնասիրություն: Առկա լուսանկարային ֆոնդի հարստացում: Հայոց ցեղասպանության պատմության վերաբերյալ գրականության և այլ նյութերի ձեռք բերում: | Հավաքչական աշխատանքի ծավալում, առկա և նորահայտ նյութի ուսումնասիրում և գիտական մշակում: Գիտական հոդվածների պատրաստում, հավաքչական աշխատանք: Կազմակերպչական աշխատանքներ: | 30.12.2015 | 3160500 |
| Ընդամենը | | | | 10534800 |

ՀՀ ԳԱԱ Նախագահություն

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրություն)

Ռ. Մարտիրոսյան

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

Տնօրեն՝ Հայկ Դեմոյան

(ստորագրություն)

Հավելված 3
«23» 01 2015 թ.
N 8-23 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Պայմանագրի գնի մասին համաձայնություն**

«Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության ուսումնասիրություն» ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի և ի դեմս ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «23» 01 2015թ. N 8-23 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 10534800 (տասը միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար չափով:

Սույն արձանագրությունը հիմք է կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
Ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24
Արարատ բանկ ԲԲՀ/հ 1510005175820100
ՀՎՀՀ 00005673
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

ՌԱՖԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կ. Տ.

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ ՊՈԱԿ
Ծիծեռնակաբերդի հուշահամալիր
Զարգացման հայկական բանկ
Հ/Հ 1810052108913313

Տնօրեն՝ Հայկ Դեմոյան

Կ. Տ.

«23» 01 Հավելված 4
2015 թ.
N 2-23 պայմանագրի

## Գիտական ծրագրի նախահաշիվ

| NN թ/կ | ծախսերի հոդվածների անվանումը | ընդամենը (հազար դրամ) | այդ թվում | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ |
| 1 | աշխատավարձ և եկամտային հարկ | 8190.6 | 1638.1 | 2047.6 | 2047.6 | 2457.3 |
| 2 | Տնտեսական և այլ ծախսեր | 2344.2 | 468.8 | 586.1 | 586.1 | 703.3 |
| | ընդամենը | **10534.8** | **2106.9** | **2633.7** | **2633.7** | **3160.6** |

Տնօրեն _____ Հայկ Դեմոյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Գլխավոր հաշվապահ _____ Մարգարիտա Խաչատրյան
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կ.Տ.

թիվ 01 2015 թ

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԳԱԱ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

| Հ/Հ | Պաշտոններ | Դրույք | Պաշտոնային դրույքը | Ամսեկան աշխատավարձը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Տնօրեն | 1 | 118.55 | 118.55 |
| 2 | Բաժնի վարիչ | 6 | 94.00 | 564.00 |
| | | | | |
| | Ընդամենը | 7 | | 682.55 |

Տնօրեն՝ Հ.Դեմոյան

Գլխ.հաշվապահ՝ Մ.Խաչատրյան